ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հուլիսի 22-ին Հայ Առաքելական Եկեղեցին տոնեց Փրկչի Պայծառակերպության՝ Վարդավառի տոնը, որը հանդիսանում է Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկը:

Այդ օրը Վիրահայոց թեմի համար եղավ կրկնակի ուրախության օր, քանի որ Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Թբիլիսիի Ս. Գեորգ Մայր եկեղեցում, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի, կատարվեց Կարլոս սարկավագ Հարությունյանի քահանայական ձեռնադրությունը:

Նախորդ օրը, հուլիսի 21-ին, երեկոյան ժամերգությունից հետո, գերաշնորհ սրբազանի կողմից և Տ. Հովհաննես ավագ քահանա Դանիելյանի խարտավիլակությամբ, կատարվեց «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Կիրակի օրը հոծ բազմություն էր հավաքվել Ս. Գևորգ եկեղեցում: Նրանց համար ևս բաղձալի օր էր, քանզի մի հոգևորականով ևս պիտի ավելանար Վիրահայոց թեմը:

Ս. պատարագի ընթացքում նորընծան ծնրադիր բարձրացավ Ս. Խորան, ձեռքերը վեր բարձրացրած դարձավ դեպի ժողովուրդը՝ հրաժարվելով աշխարհից, կոչվեց «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն Սրբոյ Եկեղեցւոյ»:

Այնուհետև պատարագիչ առաջնորդ սրբազանը, դնելով ձեռքը նորընծայի գլխին, հանդիսավորությամբ կարդաց ձեռնադրության աղոթքը. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան»: Դպիրները միաբերան վկայեցին՝ «Արժանի է»:

Եվ ահա ձեռնադրության ամենախորհրդավոր ու գեղեցիկ պահն է. գերաշնորհ սրբազանը սրբալույս մեռոնով օծում է ճակատն ու ձեռքերը նորընծա քահանայի՝ վերանվանելով նրան Տ. Տաթև քահանա:

Տ. Տատև քահանան տալիս է իր առաջին օրհնությունը՝ «Խաղաղություն ամենեցուն»:

Ս. պատարագի ավարտին գերաշնորհ Տ. Գևորգ սրբազանը նորընծային ներկայացնում է ժողովրդին, տալիս նրան իր հայրական հորդորներն ու մաղթանքները՝ լինել հավատարիմ և նվիրյալ զինվորը Քրիստոսի Եկեղեցու, ծառայել Հայ Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդին:

Տ. ՏԱԹԵՎ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1961 թ. հուլիսի 21-ին Սուխումիում (Վրաստանի Հանրապետություն):

1968—1971 թթ. սովորել է տեղի № 9 միջնակարգ դպրոցում:

1971—1978 թթ. շարունակել է կրթությունը Թբիլիսիի № 74 միջնակարգ դպրոցում:

1978—1983 թթ. սովորել և ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ստանալով ինժեներ-շինարարի կոչում:

1983—1985 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1989 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, ձեռամբ գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1990 թ. ավարտել է հոգևոր ճեմարանի դասընթացը:

Մայր Աթոռում իր քառասունքն անցկացնելուց հետո, հոգևոր ծառայության կմեկնի Սուխումի՝ որպես հոգևոր հովիվ:

*

* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծային և հույս հայտնում, որ նա կլինի աթոռանի ուպասավոր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և աշխարհասփյուռ հայ ժողովրդի: